



Պեճրոս Դ, քաղաւոր Արագոնի
Pierre IV, roi d'Aragon.

կը բանեցնէր Պեճրոս, որպէս զի քաղաքավարութիւնով մը գրաւէ սուլտանն եւ ազաա արձակել տայ Հայոց թագաւորն ու պարսկաները :

Պեճրոս իր լիազօր զեռպանին՝ Բ. Սապէրայի՝ յանձնած էր սուլտանին եւ հետեւորդներուն արուելիք նուէրներէն զատ երկու մասնաւոր նամակներ, որոնց մին ուղղուած էր սուլտանին, իսկ մյուսը իննամակալ Բարկուէ ամիրային, որմէ կախում ունէր ամէն բան :

Հակառակ բոլոր խուզարկութիւններու՝ սուլտանին զրկուած նամակին պատճէնը կարելի չեղաւ ձեռք բերել, եւ սակայն Բարկուէին զրկուածը գտայ, որ հետեւեալն է .

Թուղթ Պեճրոսի Դ առ ամիրայն Բարկուէ (1)

Ես Պեճրոս, շնորհիւն Աստուծոյ, թագաւոր Արագոնի եւն. , առ զերազնիւ եւ մեր ամենասիրելին Բարկուէ, պերճաշուք ամիրայ եւ հզօր իշխան սուլտանին Բարեւոյնի, ողջոյն եւ անկեղծ սէր :

Գերազնի՛ւ ամիրայ ,

Համաձայն տեղեկագրին մեր հաւատարիմ հպատակ Փրանկիսկոս Սակկոզայի, որ է վաճառական եւ նաւատէր Բարսելոնայի մէջ ,

(1) Բնագիրը տե՛ս զբիս վերջը՝ Document VIII : Լանգրուա եւ ուրիշներ Բարկուէին տուած almirayl ածականէն կը հետեւցնեն, քե այս անձը « ծովակալ » մըն եր . բայց կը մտնան, որ Ֆրանսերէն amiral բառն իսկ « ծովակալ » չի նշանակեր ամէն տեղ : Մեր հայերէն Ամիրայ բառը շատ լաւ կը յարմարի հոս :